ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ

1992թ. մայիսի 9-ին տեղի ունեցավ Պատմաբանների հայկական ընկերության գիտաժողովը, որտեղ քննարկվեց հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցը։ Գիտաժողովին ներկա էին շուրջ հիսուն պատմաբաններ (գերասանցապես՝ ընկերության վարչության և նախագահության անդամներ), ուսանողներ, հանրապետական մամուլի ներկայացուցիչներ։

Գիտական համաժողովը բացեց ընկերության նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Ա. Խուրշուդյանը։ Նա հակիրճ ներկայացրեց քննարկման դրված հիմնահարցի, այն է՝ հայ ժողովրդի պատմության պարբերացման կարևորությունը, դրա հրատապ լուծման անհրաժեշտությունը։ Բանն այն է, որ մինչև վերջերս և անգամ այսօր հայ պատմագիտության մեջ իշխող դեր են խաղում այն դոգմաները, որոնք պարտադրված են եղել Խորհրդային կայսրության կազմում գտնված ժողովուրդների պատմագիտությանը, որն ամբողջովին կուսակցականացված էր, դասակարգայնացված և ծառայում էր կոմունիստական գաղափարախոսությանը։ Վիճակի բարելավման միտումներ են նկատվում 1991 թ. օգոստոսից հետո, երբ վերջնականապես փլուզվեց Խորհրդային կայսրությունը, և նրա կազմում գտնվող հանրապետություններն անկախություն ստացան։ Անկախ Հայաստանի հանրապետության պատմագիտական միտքը վերջնականապես ազատագրվելով մարքս-լենինյան գաղափարախոսության պետական կապանքներից՝ մտավ իր զարգացման նոր փուլը։ Հայոց պատմագիտության արդի փուլի հիմնական նպատակն ազգային պատմագիտության սկզբունքների վերականգնումն է, հայ ժողովրդի բազմադարյան պատմության մշակումը՝ հայ և համաշխարհային պատմագիտական մտքի լավագույն նվաճումների հիման վրա։

Լ. Ա. Խուրշուդյանը հավաստեց, որ հայոց պատմագիտության զարգացման այս նոր փուլում կարևոր դեր ունի կատարելու Պատմաբանների հայկական ընկերությունը, որը ապաքաղաքական պատմագիտական կազմակերպություն է և, որն այդ դիրքերից էլ պետք է կազմակերպի իր աշխատանքները։ Ընկերությունը պլանավորել է հայ ժողովրդի պատմության բազմաթիվ չլուծված, վիճելի և նենգափոխված հիմնահարցերի քննարկում։ Արդի փուլում ընկերությունն անհրաժեշտ է գտել առանձնացնել և առաջին քննարկման նյութ դարձնել հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցը։ Առանց այդ բարդ հիմնահարցը լուծելու հնարավոր չէ մտածել պատմագիտության բնագավառում լուրջ լայնամասշտաբ ձեռքբերումների մասին, մանավանդ, որ այն առնչվում է ամբողջ հայ պատմագիտության հետ՝ հայ ժողովրդի կազմավորումից մինչև մեր օրերը, որը կաղապարված է Մարքսի հինգ սոցիալ-տնտեսական ֆորմացիաների տեսության շրջանակներում։ Վերջում ելույթ ունեցողը հույս հայտնեց, թե համաժողովը կանցնի խիստ գործարար մթնոլորտում և այն շատ շուտով կունենա պրակտիկ գործառություն, քանզի քննարկման արդյունքները դրվելու են թե՛ դպրոցական ու բուհական ծրագրերի ու դասագրքերի և թե հայ ժողովրդի պատմության ակադեմիական քառահատորյակի հիմքում։

Այնուհետև քննարկվող հարցի շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն։ Առաջինը ձայնը տրվեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանին։ Ելույթ ունեցողը կանգ առավ հարցի նախապատմության վրա։ Հայ ժողովրդի պատմության հին ժամանակաշրջանի պարբերացման մասին ծանրակշիռ տեսակետներ են ար-

տահայտել ականավոր պատմաբաններ Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանը։ Ավելի ուշ Հայ ժողովրդի պատմության պարբերացման իր սխեման առաջարկեց պրոֆ. Ս. Երեմյանը, որն առաջիններից մեկը փորձեց հիմնավորել ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի առկայությունը հին Հայաստանում։ Ստրկատիրական ֆորմացիան որոշ պատմաբաններ ընդունել են անվերապահորեն, այլք՝ պայմանականորեն, մանավանդ, որ ստրկատիրությունը Հայաստանում նույն բնույթը չի կրել, ինչ անտիկ կամ հունա-հռոմեական երկրներում։ Բազմաթիվ փաստերի մանրակրկիտ վերլուծությունը մեզ բերել է այն հետևության, որ ֆեոդալական հարաբերությունները հին Հայաստանում հաղթանակեցին IV—V դարերում։ Այդ դարերը հայոց պատմության պարբերացման հիմնական սահմանագծերից են։ Դրա օգտին են խոսում մի շարք ցուցանիշներ։ Այսպես, հին Հայաստանի բազմաթիվ և ծաղկուն քաղաքները, որոնց մի մասը դեռ ուրարտական արմատներ ուներ, իսկ մյուսները ծագել էին հելլենիստական դարաշրջանի քաղաքաշինության բովից, IV դարում անկում են ապրում և վերածվում գյուղերի (բացառությամբ՝ Դվինի)։ Նոր քաղաքները, որոնք բարձրացան կես հազարամյակ անց, առաջացան այլ տեղերում և էապես տարբերվում էին հին քաղաքներից։

Հին Հայաստանում իշխող գաղափարախոսությունը՝ հեթանոսական կրոնը, որը գալիս էր հնագույն ժամանակաշրջանից, դարձյալ նույն IV դարում իր տեղը զիջում է նոր գաղափարախոսությանը՝ քրիստոնեությանը, որը կարևոր գործոն է պարբերացման հիմնահարցում։ Զեկուցողը նկատեց, որ IV—V դարերում հայկական մշակույթն էապես փոխվեց, ազգայնացավ, ինքնուրույնացավ, մինչդեռ մինչև IV դարը հայկական մշակույթն ավելի շատ արտաքին ազդեցությունների և արժեքների կուտակման ժամանակաշրջան էր։ Հելլենիստական տիպի մշակույթը IV դարում թե՛ իր նյութական, և թե՛ հոգևոր ոլորտներում փոխարինվեց հայ ազգային փարթամ այն մշակույթով, որը V դարում ապրեց իր «Ոսկեդարը»։ Հայ գրերը նույնպես ստեղծվեցին IV դարի վերջին և V դարի սկզբին, որը խիստ սկզբունքային գործոն է։

Վերջապես, անցած հազարամյակի ծնունդ հին հայկական պետությունը IV դարի վերջին—V դարի սկզբին անկում է ապրում։ Հաջորդ հայկական ինքնուրույն պետությունը ծնվում է դարձյալ կես հազարամյակ անց։ Այսպիսով, հայոց հին և միջնադարյան պատմության սահմանն անցնում է IV—V դարերի վրայով։ Ելնելով վերոնշվածից, Գ. Խ. Սարգսյանն առաջարկեց մինչև IV դարի Հայաստանն անվանել նախաֆեոդալական, իսկ IV դարից հետո՝ միջնադարյան կամ ֆեոդալական Հայաստան։ Ըստ զեկուցողի, եթե միջնադարյանը կարող ենք կոչել նաև «ֆեոդալիզմի» շրջան, ապա հնի համար «ստրկատիրականը» խիստ պայմանական բնույթ է կրում։

Երևանի պետական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վ. Ա. Դիլոյանն իր ելույթում նախ կանգ առավ պատմագիտության բնագավառում մարքս-լենինյան ուսմունքի խաղացած բացասական հետևանքների վրա։ Դարակազմիկ այն փոփոխությունները,—նշեց նա,—որոնց ականատեսն ու մասնակիցը եղավ մեր սերունդը, պատմաբանների առջև ծառացնում են հարցեր, որոնք ամենախոր գիտական վերլուծության ու ընդհանրացման կարիք են զգում։ ԽՍՀՄ-ի փլուզումը ոչ միայն կայսրության, այլև գաղափարախոսական մի ամբողջ ուսմունքի փլուզում էր, որը հավակնում էր միակ ճշմարիտ և պատմության զարգացման ընթացքին համապատասխանող ուսմունքը լինելու, մի ուսմունք, որն անհանդուրժամիտ էր, դրանով իսկ վերածվելով քարացած դոգմայի։

Մարքսիզմ-լենինիզմի անկյունաքարային դրույթներից մեկը, շարունակեց զեկուցողը, հասարակական-տնտեսական արտադրաեղանակի կամ ֆորմացիաների մասին ուսմունքն է, որը կոչված էր ապացուցելու կոմունիստական հասարակության կառուցման անհրաժեշտությունն ու բացարձակությունը։ Ըստ այդմ էլ ընդունված էր պարբերացնել պատմությունը, շատ դեպքերում անտեսելով այս կամ այն ժողովրդի հասարակական և տնտեսական

կյանքի զարգացման առանձնահատկությունները։ Ընդունվում է նաև, այսպես կոչված, թռիչքաձև զարգացումը։ Դրա նպատակն էր՝ հիմնավորել քոչվորական կամ ավատատիրական կացությունից միանգամից սոցիալիզմի անցնելու հնարավորությունը՝ անխոցելի դարձնելու համար տեսության թույլ կողմերը։

Հայ պատմաբաններիս համար կենսական անհրաժեշտություն է հայոց պատմության ճշտիվ պարբերացումը, որը, ցավոք, կրում է խորհրդային երկրում պարտադրված պատմագիտության խոր ազդեցությունը։

Այսպես, դատելով «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության առաջին հատորի բովանդակությունից, Հայաստանում իբր եղել է ստրկատիրական հասարակարգ և այն գոյատևել է ոչ ավել, ոչ պակաս, քան ընդհուպ մինչև մ. թ. IV դարը, այսինքն՝ ստրկատիրական են եղել Արարատյան (Ուրարտու), Երվանդունի, Արաշեսյան և Արշակունյաց թագավորությունների ժամանակաշրջանները, հակառակ հայ խոշորագույն պատմաբաններ Ն. Ադոնցի և նրա տեսակետը պաշտպանող Հ. Սանանդյանի կարծիքների։ Բայց այդ դեպքում բոլորովին անհասկանալի է մնում նախարարական կարգը, այդ կարգի ծագումնաբանությունը և էությունը, այլևայլ հարցեր։

Մինչդեռ հայ նախարարությունները կազմավորվել ու զարգացել են նահապետական տոհմացեղային կարգերի հենքի վրա։ Սվ ամենևին պատահական չպիտի համարել, որ ուշ շրջանի աղբյուրներում նախարարությունները բնորոշվում են որպես ազգապետություններ, դրանով իսկ ընդգծելով այն ուղղակի կապը, որ գոյություն է ունեցել նահապետական տոհմացեղային կարգի և նախարարական համակարգի միջև։ Այդ տեսանկյունից էլ լիովին անհասկանալի է մնում, թե ինչպես քայքայվեցին, ավելի ճիշտ ինչ ուղղությամբ զարգացան նահապետական տոհմային կարգերը և անցում կատարվեց ստրկատիրական հասարակության։

Վ. Ա. Դիլոյանը այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանում նույնպես եղել են ստրուկներ և ստրկատիրական կացությունաձև, բայց ստրկատիրական հասարակարգ (ֆորմացիա) գոյություն չի ունեցել։ Չպետք է մոռանալ, որ Հայաստանում գոյություն է ունեցել մեծաթիվ գյուղացիական զանգված, որը եղել է հասարակության կերակրողը, նրա նյութական կայունությունն ապահովողը։

Անորոշության քողով է ծածկված նաև Արարատյան (Ուրարտու) թագավորության և Երվանդունիների թագավորության ժամանակաշրջանի Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքի նմանությունների ու տարբերությունների հարցը, որովհետև փաստարկները համոզիչ չեն, իսկ փաստական նյութերը գրեթե լիովին բացակայում են։ Եղածն էլ հիմնված է փաստերի համադրման վրա, այն էլ վերցված հարևան երկրների, այնուհետև հելլենիստական աշխարհի պատմությունից։

Այս անորոշությունից էլ, շարունակեց զեկուցողը, բխում է ավատատիրության ծագումնաբանության հարցում թույլ տրված սխալը։ Ավատատիրական հարաբերությունների ծագումնաբանությունը վերագրել մ.թ. IV դարին, նշանակում է ոչ ճիշտ լուսաբանել նախընթաց պատմությունը։ Ավատատիրական հարաբերությունները, ավատատիրական հասարակությունը Հայաստանում առաջ են եկել նահապետական, տոհմա-ցեղային կարգերի հիմքի վրա և այն էլ մ. թ. ա. IX—VI դդ. ընդմիջոցին։

Ավատատիրական հասարակարգի գոյությունը Հայաստանում հասցվում է (մեխանիկորեն և Ռուսաստանի պատմության հետևողությամբ) մինչև XIX դարի կեսերը, իսկ Արևմտյան Հայաստանի համար՝ մինչև XX դարը։ Սա ևս ճիշտ չէ, որովհետև զանց են առնվում մի շարք գործոններ։ Չնայած Հայաստանը XVI դարից կռվախնձոր դարձավ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի միջև, բայց շնորհիվ աշխարհի տարբեր ծայրերում գտնվող հայկական գաղութների, ինչպես նաև մի կողմից՝ հայ վաճառականական կապիտալի ներկայացուցիչների, իսկ մյուս կողմից՝ եվրոպական այլևայլ երկրների հետ հայ եկեղեցու միջոցով իրագործվող մշտական կապերի, Հայաստանը հաղորդակցվում էր ժամանակի դարակազմիկ տե-

ղաշարժերին՝ XVI դարի երկրորդ կեսի նիդեռլանդական հեղափոխությանը և 1640—1660 թթ. անգլիական բուրժուական հեղափոխությանը, որոնք իրենց աղդեցությունը թողեցին XVII դարում վերելք ապրած հայ ազգային-ազատագրական շարժման, մասնավորապես՝ շարժման ղեկավար գործիչների վրա։ Պատահական չէր, որ Ամստերդամը դարձավ հայկական գրատպության կարևորագույն կենտրոն, կամ Վենետիկը՝ Մխիթարյան միաբանության գիտադրական գործունեության կենտրոն։

Առայսօր ընդունված է Հայաստանի պատմության նոր ժամանակաշրջանի սկիզբը համարել 1801 թ., որը շրջադարձային, դարակազմիկ նշանակություն չունի։ Դրանով փաստորեն աչքաթող է արվում XVII—XVIII դդ. հայ ազատագրական շարժումների ժամանակաշրջանը։

Արդեն XVII դարում, նկատեց Վ. Ա. Դիլոյանը, հայ վաճառականական կապիտալն այնպիսի աննախընթաց վերելք էր ապրում, որը չէր կարող չհանգեցնել հայրենի նախասկզբնական կուտակման։ Իսկ XVIII դարում նկատվում էր հայ վաճառական կապիտալն արդյունաբերականի վերածվելու միտում, որն ընդգծվում էր, հասկանալի պատճառներով, հայկական գաղութներում։ Պատահական չէր, որ գաղութահայ բուրժուազիան իր ձեռքը վերցրեց գրատպության գործը և սկսեց տարածել առաջադիմական գաղափարներ։ Դրա դրոշակակիրները դարձան Հնդկաստանի հայ բուրժուազիայի ներկայացուցիչները՝ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը և այլն։ Բուրժուազիան գաղութից իր հայացքը դարձրեց դեպի հայրենի Հայաստան՝ նրա ազատագրումը կապելով լուսավորական գաղափարների և բուրժուական (հանրապետական) կարգերի հաստատման հետ («Յորդորակ», «Որոգայթ փառաց», «Նշավակ»)։ Այդ հայացքները լիովին բաժանում էին նաև Ռուսաստանում հանգրվանած հայ բուրժուազիայի ներկայացուցիչները՝ ի դեմս Լազարյանների և նրանց հետևորդների։

Ձեկուցողն ընդգծեց, որ հայոց պատմության նոր ժամանակաշրջանի առանցքային խնդիրը ազգային-ազատագրական շարժման, նրա գաղափարաբանության և նպատակաուղղվածության հարցն է, հարակից բաղկացուցիչներով հանդերձ։ Այդ իմաստով նոր պատմության ժամանակագրական շրջանակները պետք է ամփոփվեն XVII դ. 2-րդ կեսից մինչև 1918 թ. մայիսի 28-ը ընկած ժամանակահատվածում (երբ հաստատվեց հայկական ազգային պետականությունը)։ Այնուհետև սկսվում է մեր նորօրյա (արդի) պատմությունը՝ իր վայրիվերումներով հանդերձ։ Այսպիսով, ամբողջ հայոց պատմությունը կարելի է ստորաբաժանել չորս հիմնական շրջանների.

1. Նահապետական, տոհմա-ցեղային,
2. Ավատատիրական (մ. թ. ա. IX դ.—մ. թ. XVII դ. երկրորդ կես),
3. Նոր պատմություն (XVII դ. երկրորդ կես—1918 թ.)
4. Արդի պատմություն (1918—առ այսօր)։

Իր ելույթում Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Փ. Շահինյանը հայ ժողովրդի պատմության պարբերացումը՝ ըստ հասարակական-տնտեսական ֆորմացիաների, նույնպես համարեց խիստ բռնաձիգ և շեշտեց, որ նման բաժանումը երբեք էլ չի համապատասխանել մեր պատմության իրական բովանդակությանը։ Լ. Շահինյանը կարծիք հայտնեց, որ հայ ժողովրդի պատմությունը չի ընթացել «դասական» կոչված կացութաձևերին համապատասխան և հաջորդականությամբ, այլ նրան բնորոշ են, այսպես ասած, «խոտորումները» և էական առանձնահատկությունները։ Կարիք չկա, ասաց նա, փաստարկել ֆորմացիոն պարբերացման անհամատեղելիությունը մեր պատմության նկատմամբ։ Պարբերացման այդ սկզբունքն ուղղակի ու վճռականորեն պետք է վերանայել, մերժել և փորձել այլ սկզբունքներով պարբերացնել հայ ժողովրդի պատմությունը։ Այստեղ հարց է ծագում՝ ի՞նչ սկզբունքով կատարել նոր ժամանակաբաժանումը։ Ըստ այդմ, Լ. Շահինյանը առաջարկում է հայ ժողովրդի պատմության ժամանակաբաժանման հիմքում ընդունել ժամանակի գործոնը՝ բաժանարար

դարձնելով հայոց կյանքի գարակազմիկ իրադարձությունները։ Դրա համաձայն կունենանք հետևյալը.

1. Հնագույն շրջան (սկզբից մինչև մ. թ. ա. 134 թ.),
2. Հին շրջան (մ. թ. ա. 134 թ.—428 թ.)՝ հեթանոս Արշակունիներ, քրիստոնյա Արշակունիներ ենթաբաժիններով,
3. Միջնադար (428 թվից մինչև XVIII դ. վերջ)՝
հետևյալ ենթաբաժիններով.
ա. վաղ միջնադար (V—XI դդ.),
բ. միջին միջնադար (XI—XV դդ.),
գ. ուշ միջնադար (XVI դարից—1800 թ.)։
4. Նոր շրջան (1801—1918 թթ.),
5. Նորագույն շրջան (1918 թ.—առ այսօր)։

Վերջում ելույթ ունեցողը դարձյալ շեշտեց, որ նշված սկզբունքներն առավել հաստատուն են, առավել տարողունակ։ Դրանք չեն հակասում համաշխարհային պատմագիտության մերօրյա պահանջներին։

Ջնայած Լ. Շահինյանի համոզվածությանը, թե ֆորմացիոն պարբերացման վերանայման հարցում տարակարծիքներ չկան, հաջորդ ելույթ ունեցողը՝ Ն. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր Մ. Կ. Ղազարյանը հորդորեց ծայրահեղություններից չդիմել։ Կարիք չկա այսօր ամեն ինչ հակառակն անելու, պարբերացման ֆորմացիոն տեսությունը պարունակում է կարևոր ելակետային գրույթներ և դրանցից հրաժարվելը, այլ սկզբունքներ ընդունելը սխալ կլինի, շեշտեց նա։ Հակառակվելով Վ. Ա. Դիլոյանի առաջարկած սկզբունքներին՝ ելույթ ունեցողն ընդգծեց, որ ուշ միջնադարի պարբերացման հիմքում չի կարելի դնել գաղթաշխարհի գործոնը, քանի որ բնաշխարհում այլ հարաբերություններ էին իշխում (ֆեոդալական), որով և պետք է առաջնորդվել պարբերացումը կատարելիս։ Պետք է սկզբունք ընտրել, թե բուն Հայաստանում ի՞նչ հասարակական հարաբերություններ էին տիրում, վերջին հաշվով գաղթաշխարհը չի որոշել հայ ժողովրդի պատմության ընթացքը, այլ բուն Հայաստանը։

Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Ստ. Տ. Մելիք-Բախշյանն իր հակիրճ ելույթում նշեց, որ չի կարելի հախուռն հրաժարվել պատմության պարբերացման նախորդ որոշ տեսակետներից։ Հարցը լուրջ ուսումնասիրության կարիք ունի։ Պարբերացման հիմքում պետք է դնել որոշակի սկզբունքներ, պետք է առաջնորդվել որոշակի ելակետներով։ Նախ անհրաժեշտ է որոշել պարբերացման սկզբունքն ու գտնել ելակետը, հետո՞ սոր միայն կատարել պարբերացումը։ Ի վերջո, ելույթ ունեցողը պաշտպանեց արտահայտված այն տեսակետը, թե պարբերացման հին կառույցը վերափոխման կարիք ունի և այն այլևս չի համչչպատասխանում պատմության վերաբերյալ մեր այսօրվա պատկերացումներին։ Պարբերացման նախորդ սխեմայից այժմ անվերապահորեն կարող ենք ընդունել առաջինը՝ նախնադարյան-համայնական հասարակարգն իր տարաբաժանումներով.

1. Քարի դար (պալեոլիթ),
2. Քարի-պղնձի դար (էնեոլիթ),
3. Բրոնզի դար,
4. Երկաթի դար։

Վերանայման խիստ կարիք ունի հատկապես «ստրկատիրական հասարակարգ» հասկացությունը, որը հայ պատմագիտությանը պարտադրվել է արհեստականորեն՝ 1930—40-ական թվականներին, երբ տեղի էր ունենում պատմության համահարթեցում։ Իսկ թե հասարակական ի՞նչ բնույթ է ունեցել այն հասարակությունը, որը եղել է Հայաստանում նախնադարյան կարգերի քայքայումից հետո և մինչև ե՞րբ է գոյատևել՝ կարիք ունի պարզա-

բանման և լուրջ ուսումնասիրության։ Մի բան պարզ է, որ այդ հասարակությունը հետագայում փոխակերպվել է ֆեոդալական հասարակարգով, որն էլ իր հերթին դոյատևել է մինչև XVIII դ. վերջերը։

Իր ելույթում պատմական գիտությունների դոկտոր է. Լ. Դանիելյանը նշեց, որ այսօր հայոց պատմության պարբերացման խնդրի շուրջ առաջացած բանավեճը գիտության ապաքաղաքականացման հետևանք է։ Հայոց պատմությունը դարեր շարունակ ծառայել է ազգային պատմության վավերացման և կրթության միջոցով սեփական ժողովրդի պատմական հիշողությունը կենդանի պահելու խնդրին։ Նրա կարծիքով պատմական գիտության քաղաքականացումը սկսվել է մեր դարի 20—30-ական թվականներին՝ ծառայեցվելով խորհրդային հասարակության դաղափարապես միաձուլման գործին։ Կողապարված տեսությունների առաջ գալով, աղավաղվում էին պատմական փաստերը, իրադարձություններին, առանձին անձանց և երևույթներին տրվող գնահատականները։ Սոցիալ-տնտեսական ֆորմացիաների մասին տեսությունը նույնպես քաղաքականացվեց։ Գաղափարական մակարդակի բարձրացվեց այն դրույթը, որ խորհրդային բոլոր ժողովուրդների համար օրինաչափ երևույթ էր սոցիալիզմին հասնելը, անկախ այն հանգամանքից, թե դրանք անցել էին նախորդ փուլերը, թե ոչ։ Հարցի նման դրվածքից սկսվեց պատմության համահարթեցումը, որն առանձնապես բացասաբար ազդեց հայոց պատմության վրա։ Որպես օրինակ ելույթ ունեցողը բերեց հետևյալ փաստը՝ հայ ժողովրդի կազմավորումը պաշտոնապես համարվեց Ուրարտուից հետո ընկած ժամանակաշրջանը (մ. թ. ա. VI—III դդ.)։ Մյուս կողմից ադրբեջանցիների ծագումնաբանական արմատները միջնադարից հասցվեցին մինչև մարական էթնոսի ժամանակները (մ. թ. ա. VI դ.), այսինքն՝ հնացվեցին մոտ երկու հազար տարով։ Դրանով իսկ, հայ ժողովրդի էթնիկական պատմությունը Ուրարտուով անջրպետվեց III—II հազարամյակներից։ Անշուշտ, այսպիսի մոտեցումը բացասաբար ազդեց հայոց հնագույն պատմության պարբերացման հարցերի վրա։

Անցնելով հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության պարբերացմանը՝ է. Լ. Դանիելյանը գտավ, որ այն պետք է կատարել հիմքում ունենալով պետականության առաջացման և գոյության սկզբունքը։ Այնուհետև նա առաջարկեց հետևյալ բաժանումը.

Նախնադար

1. Քարի դար,
2. Պղնձաքարի դարաշրջան։

Հին դարեր

3. Բրոնզի դար,
4. Հայ ժողովրդի կազմավորում,
5. Հայոց պետականության առաջացում,
6. Հին հայոց թագավորություններ (Ուրարտու, Երվանդունիներ, Արտաշեսյաններ, Արշակունիներ)։

Միջին դարեր

7. Արշակունիների թագավորություն (քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո),
8. Նախարարական պետականություն (V—IX դդ.),
9. Հայկական պետականության վերականգնում.

ա. Բագրատունիների թագավորություն,
բ. Կիլիկիայի հայկական թագավորություն։

Այսպիսով, ըստ է. Լ. Դանիելյանի նախնադարի և հին դարերի սահմանը հայ ժողովրդի կազմավորման եղելությունն է, իսկ հին և միջնադարյան պատմությանը՝ քրիստոնեության ընդունումը։

Համերաշխվելով որոշ ելույթ ունեցողների հետ, Երևանի պետական համալսարանի հնագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր Ստ. Ա. Եսայանն առաջարկեց զգուշություն ցուցաբերել նախորդների գործերի հանդեպ, չհրաժարվել գոյություն ունեցող այն սկզբունքներից, որոնց ճշմարտությունն արդեն ապացուցված է գիտության կողմից։ Անշուշտ, աարբերացման առայսօր օգտագործվող սխեմայի որոշ սկզբունքներ առարկության տեղիք են տալիս և կարիք ունեն ճշգրտման։ Ելույթ ունեցողի կարծիքով, հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմությունը ճիշտ կլինի պարբերացնել հետևյալ կերպ.

1. Հին Հայաստանի նախապատմություն (քարի դար),

2. Պատմական ժամանակաշրջան (Նեոլիթից մինչև մ. թ. ա. 5-րդ դար)։

Ստ. Եսայանը առաջարկեց նշված ժամանակաշրջանների ենթաբաժանումների հարցը դարձնել գիտական նեղ շրջանակների առանձնակի քննարկման հարց։

Պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ն. Կազախեցյանը նշեց, որ հայ ժողովրդի պատմության պարբերացման սխեման, անշուշտ, կարիք ունի լուրջ վերանայումների։ Առանձնակի կարծիք չարտահայտելով սխեմայի բոլոր փուլերի վերաբերյալ, նա կանգ առավ հայ ժողովրդի «նորագույն պատմության» հասկացողության բովանդակության ու նրա սահմանագծի հարցերի վրա։ Ելույթ ունեցողը նշեց, որ «նորագույն պատմություն» հասկացողությունն արտահայտում է հայկական պետականության վերականգնման գաղափարը։ Առաջնորդվելով այդ սկզբունքով՝ նա առաջարկեց հայ ժողովրդի նորագույն պատմության պարբերացման սկիզբն ընդունել 1917—1918 թվականների սահմանագիծը, երբ ստեղծվեցին Թիֆլիսի և Երևանի Աղգային խորհուրդները, որոնք ռազմաճակատի կազմալուծումից հետո մարմնավորում էին հայոց պետականությունը։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Համբարյանը հիշեցրեց, թե յուրաքանչյուր պարբերացում պայմանական է, իհարկե, անհրաժեշտության բերումով։ Իսկ հայոց պատմության պարբերացման հարցը բարդանում է օտար տիրապետությունների հետևանքով և ազդեցությամբ։ Պատմության բերումով անդամ օտար տիրապետություններն են՝ այլ եղել Հայաստանի տարբեր մասերում, այլ են եղել նաև նրանց տիրապետության հետևանքները։ Անշուշտ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ակտը պետք է արժանվույն գնահատել, գուցե թե կարելի կլիներ այն դնել հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմքում, բայց այդ դեպքում էլ պարբերացումները տարբեր կլինեն Արևելյան և Արևմտյան Հայաստանի համար։ Անուհետև ելույթ ունեցողը առաջարկեց հայ ժողովրդի վերջին շրջանի պատմության պարբերացման հետևյալ սխեման.

1. Նոր պատմություն (17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ.),

2. Նորագույն պատմություն (1918-ից առայսօր)։

Առաջինի հիմքում դրվելու է հայ ազատագրական շարժումների առկայության փաստը. երկրորդի հիմքում՝ 1918 թ. մայիսին հայկական պետականության վերականգնման փաստը։

ՀՀ ԳԱԱ արեխլագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյանն իր ելույթում նշեց, որ նախքան պարբերացում առաջարկելն անհրաժեշտ է ճշգրտել ելակետային մոտեցումները։ Ելույթ ունեցողի կարծիքով դրանք երեքն են։

Առաջին, վերցնել այն բոլոր դրականը, որ պարունակում էր նախկին՝ ֆորմացիոն սկզբունքի վրա խարսխված պարբերացումը։ Չպետք է մոռանալ, որ հին կամ ֆորմացիոն պարբերացման մեջ առկա էին համամարդկային արժեքներ և կատեգորիաներ (ֆեոդ-ֆեոդալիզմ, կապիտալ-կապիտալիզմ, բյուրգեր-բուրժուազիա և այլն), որոնք ձևավորվել և մարդկությանը հայտնի էին նախքան մարքսիզմ-լենինիզմի հանդես գալը։

Երկրորդ, ազգային պատմության պարբերացումը կատարելիս հաշվի առնել համաշխարհային պատմության պարբերացումը, նրանք պետք է կամ համընկնեն, կամ ժամանակի առումով իրար մոտ լինեն։ Այս հանգամանքը

պայմանավորված է նրանով, որ վաղնջական ժամանակներից ժողովուրդները ապրել են ոչ մեկուսի կողք կողքի, այլև իրար հետ և քաղաքական, տնտեսական ու մշակութային առումով կապված են եղել և ներազդել միմյանց վրա։

Երրորդ, սահմանել պարբերացման հավաստի չափանիշներ, որոնք բաժանվում են երկու խմբի.

ա) կայուն կամ անփոփոխ չափանիշ։

Դա տվյալ ժողովրդի պետականության հարցն է, որի տակ հասկացվում է պետականության ստեղծումը, պահպանումը և վերականգնումը։

բ) Ոչ կայուն կամ շարժական չափանիշներ։ Սրանց մեջ մտնում են հոգևոր-մշակութային, գաղափարաբանական, սոցիալ-տնտեսական և այլ գործոններ։ Այնուհետև ելույթ ունեցողը, ելնելով վերոնշված սկզբունքներից, շեշտեց, թե ինքը հայ ժողովրդի պատմության պարբերացումը պատկերացնում է հետևյալ կերպ.

1. Հնագույն շրջան (վաղնջական ժամանակներից մինչև մ. թ. ա. VI դ.)։

Մ. թ. ա. VI դարը որոշակի սահմանագիծ է Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մեջ՝ պետականության, քաղաքական անկախության և իր ինքնության հաստատման տեսանկյունից։ Դա հիմնական գծերով համընկնում է նաև համաշխարհային պարբերացմանը (ասուրա-բաբելական քաղաքական և մշակութային տիրապետության վերացումը, քաղաքական ասպարեզում նոր ուժերի հանդես գալը և այլն)։

2. Հին շրջան (մ. թ. ա. VI—մ. թ. V դդ.)։

Այս շրջանն ավարտվում է հայկական թագավորական պետականության փոխակերպումով նախարարական պետականությամբ և հոգևոր-մշակութային սկզբունքորեն նոր, արմատական հեղաշրջումով՝ քրիստոնեության ընդունում և ամրապնդում, հայկական տառերի գյուտ, ազգային մշակույթի աննախընթաց վերելք և այլն։ Այս բաժանումը համընկնում է համաշխարհային պարբերացմանը՝ V դ. վերջում (476 թ.) կործանվեց Արևմտյան Հռոմեական կայսրությունը, որով, ինչպես ընդունված է համաշխարհային պատմագիտության մեջ, ավարտվեց մի պատմական դարաշրջան՝ հին դարերը։

3. Միջին դարեր (V—XVII դդ.)։

Նման բաժանումը բխում է բուն հայ ժողովրդի պատմությունից և համընկնում է համաշխարհային պատմության մեջ կատարված արմատական տեղաշարժերի հետ, որոնց ամենացցուն դրսևորումներն են հոլանդական և անգլիական հեղափոխությունները։

4. Նոր շրջան (XVIII դ. սկիզբ—1918 թ.)։

Այս շրջանը կարելի է անվանել հայ ազգային-քաղաքական զարթոնքի շրջան։ Դրա տրամաբանական ավարտը հանդիսացավ Հայաստանի անկախության և պետականության վերականգնումը՝ ի դեմս Հայաստանի հանրապետության։ Պետք է նշել, որ 1918 թվականը որոշակի շրջաժան դիծ է նաև համաշխարհային պատմության մեջ՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտ, ռուսական, Օսմանյան և Ավստրո-Հունգարական կայսրությունների կործանում, կայզերական Գերմանիայի տապալում և սկզբունքորեն նոր քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրադրության ստեղծում։

5. Նորագույն շրջան (1918-ից մինչև մեր օրերը)։

Դրա բնորոշ գիծը Արևելյան Հայաստանում պետականության գոյությունն է՝ նրա դրսևորման երեք փուլերով (Հայաստանի անկախ հանրապետություն՝ 1918—1920 թթ., Հայաստանը որպես միութենական հանրապետություն ԽՍՀՄ-ի կազմում՝ 1920—1991 թթ. և Հայաստանի Հանրապետություն՝ 1991 թվից մինչև օրս) և Սփյուռքի ձևավորումը որպես Արևմտյան Հայաստանի բռնի դատարկման արդյունք։

Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Յու. Ի. Մկրտումյանն իր հակիրճ ելույթում շեշտեց, որ պատմության պարբերացումն ըստ հասարակական-տնտեսական ֆորմացիաների ճիշտ չէ։ Բոլոր ժողովուրդների համար

ֆորմացիոն պարբերացումը չի կարող հիմք ծառայել, քանի որ համաշխարհային պատմական պրոցեսը զարգանում է անհամաչափ։ Յուրաքանչյուր ժողովրդի, այդ թվում և հայ ժողովրդի պատմության պարբերացումը պետք է կատարվի հաշվի առնելով տվյալ ժողովրդի պատմության առանձնահատկությունները։ Իսկ պարբերացման հիմքում պետք է դրվեն ժողովրդի պատմության որակական փոփոխությունները (քաղաքական. տնտեսական. մշակութային, իրավական ու կրոնական)։ Այնուհետև Յու. Ի. Մկրտումյանն առաջարկեց հայ ժողովրդի պատմությունը բաժանել հետևյալ ժամանակաշրջանների.

1. Հնագույն ժամանակաշրջան (մինչպետական կազմավորումներ),
2. Հին շրջան (մ. թ. ա. IX—մ. թ. V դդ.),
3. Միջին շրջան (V—XVIII դդ.),
4. Նոր շրջան (XIX դ. սկզբից—1918 թ.),
5. Նորագույն շրջան (1918 թվից առ այսօր)։

ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Գ. Ա. Տիրացյանի ելույթն առավել հակիրճ էր, իսկ խոսքը՝ համոզված։ Նա ուղղակի հայտարարեց, թե անկախ տեղի ունեցող քաղաքական փոփոխություններից ու ժամանակի մտայնություններից, ինքը շարունակում է դավանել մարքսիստական պատմական մատերիալիզմի սկզբունքը և՝ գտնում է, որ պատմության պարբերացման հիմքում պետք է դրվի հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը։ Այսինքն՝ պետք է պահպանել պարբերացման ավանդական ներքոնշված բաժանումները՝

1. Նախնադարյան-համայնական հասարակարգ,
2. Ստրկատիրական հասարակարգ,
3. Ֆեոդալիզմ,
4. Կապիտալիզմ,
5. Կոմունիստական հասարակարգ։

Պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ Ա. Ա. Ստեփանյանը նշեց, որ պարբերացումը պատմագիտության թերևս ամենաբարդ հիմնահարցն է։ Նրանում արտացոլվում է պատմական անցյալի, ներկայի և տեսանելի ապագայի ընկալման այն կերպը, որը հատուկ է ընկերային գիտակցության տվյալ մակարդակին։ Եվ որքան բարձր է վերջինս, այնքան համակողմանիորեն են մշակված պարբերացման օբյեկտի չափանիշները։ Ելույթ ունեցողն ասաց, որ ընկերային գիտակցության ցածր մակարդակներում, որպես պատմության պարբերացման օբյեկտ վերցվում է ընկերային կյանքի այս կամ այն գործոնը՝ տնտեսություն, քաղաքական կյանք, կրոն, մշակույթ, ընկերային հոգեբանություն։ Ըստ որում, այդ գործոնները ներկայացվում են կամ «դիսկրետ մեկուսության» կամ էլ «աստիճանակարգային ամբողջության» մեջ։ Երկու դեպքում էլ արդյունքը, ըստ էության, նույնն է։ Չնայած թվացյալ շարժմանը, պատմությունը դատապարտված է սիսիֆյան անշարժության։ Ընկերային գիտակցության բարձր մակարդակներին հատուկ է ձգտումը՝ պատմության ընկալման (նաև պարբերացման) միաչափ համակարգերը փոխարինելու ավելի բարդ (հասարակակենտրոն-մարդակենտրոն) համակարգերով՝ կոչված բացահայտելու վերջինիս խորքային իրողությունները, որոնց հասել են նեոկանտական և անալիտիկական դպրոցները։

Այնուհետև Ա. Ա. Ստեփանյանը վերլուծեց խնդրո առարկա հարցի վերաբերյալ անտիկ մտքի ձեռք բերած հանրագումարները և նշեց, որ սկսած սոֆեստներից և ապա Պլատոնից ու Արիստոտելից անտիկ հասարակագիտությունը մշակել է մի կատեգորիա, որին ելնելով քննարկում է ընկերային կյանքի բոլոր կարևոր հիմնահարցերը։ Դա մարդկանց համակեցության կատեգորիան է, որի ծիրում (միասնական մշակույթի շարակարգության մեջ) միավորվում են ընկերային կյանքի այնպիսի տարասեռ գործոններ, ինչպի-

սիք են՝ արտադրության գործիքը, ռազմակարգը և կրոնական պատկերացումը, փոխադրության միջոցը, պետությունը և փիլիսոփայական խոհը, սեռական կյանքը, սպորտային խաղը և ըստ համակարգը։ Այս լույսի ներքո մարդկային համակեցությունը ներկայանում է որպես մի բարդ, ինքնակազմակերպող և ինքնակառավարող համակարգ, որի գոյության տարբեր շրջափուլերում առանձնահատուկ նշանակություն է ստանում նրա այս կամ այն կառուցակազմիկ սարքը (կամ տարրերի համադրությունը)։ Համակեցությունը բարձրագույն դրսևորում է ստանում պոլիսի՝ քաղաք-պետության մակարդակում։ Ելնելով այսօրինակ պատկերացումներից՝ հին հույները (Թուկիդիդես, Արիստոտել) կարևորում էին իրենց պատմության տարբեր դարաշրջանները.

. Հոմերոսյանը՝ էթնոռազմական և ցեղային ինտեգրացիայով, արխայիկը՝ տնանկության և քաղաքային կյանքի ծաղկմամբ, դասականը՝ ստեղծագործական հասարակաշինությամբ և մշակույթի զարգացմամբ։ Այլ խոսքով ասած, հունական պատմությունը ներկայացվում էր որպես «հունականություն»՝ ժամանակի և տարածության կոնկրետ հոլովույթում։

Անդրադառնալով հայոց պատմության պարբերացման խնդրին՝ Ա. Ա. Ստեփանյանը նշեց, որ անպայման պետք է հաշվի առնել և ընդունել նախորդ ուսումնասիրողների կատարած դրական աշխատանքը։ Միաժամանակ պետք է ընդունել նաև այն, որ այդ աշխատանքը, կառուցված լինելով ընկերային կյանքի այս կամ այն գործոնի վրա, չի կարող արտահայտել պատմության բարդ և հակասական համայնապատկերը։ Նրա կարծիքով, նախքան պարբերացման կոնկրետ հարցերին անդրադառնալը, պետք է կատարվի տեսական ընդհանրացնող ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով որոշարկել պարբերացման օբյեկտը՝ «հայոց համակեցությունը»։ Վերջինիս չափանիշների շարքում, բացի նշված ընկերային կյանքի ստանդարտ գործոններից, պետք է ներառել նաև զուտ հայկական գործոններ։ Որպես օրինակ կարելի է առանձնացնել հայկականության «սահմանային բնույթը». Արևելք-Արևմուտք, պատմության շարունակականություն-ընդհատություն (էնտրոպիա), համայնական կենսակերպ և մտածողություն-ինդիվիդուալիզմ, գործարար ոգի-մետաֆիզիկ մտածողություն և այլն։ Եթե փորձենք պարբերացման այս օբյեկտի տեսանկյունից լուսաբանել հայոց պատմության հին շրջանի՝ Ուրարտուից մինչև մ. թ. I դար իրողությունները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ էտապները՝

1. Ուրարտու (մ. թ. ա. IX—VI դդ.). պալատական քաղաքակրթություն,
2. Անցումային դարաշրջան (մ. թ. ա. VI—IV դդ.). հասարակական էնտրոպիա,
3. Զևավորվող հելլենիզմ՝ Երվանդունիներ, Արտաշեսյաններ (մ. թ. ա. IV—I դդ.). քաղաքային քաղաքակրթություն և ստեղծագործական հասարակաշինություն։

Վերջում Ա. Ստեփանյանը նշեց, որ ճիշտ է, այս պարբերացումը և նրա առանձին էտապների որոշիչ գործոնները պայմանականության կնիքն են կրում, սակայն, կարևորը պարբերացման այն նոր համակարգն է, որն ինքը փորձեց հիմնավորել իր ելույթում։

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Պ. Հ. Հովհաննիսյանը նշեց, որ հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցը վերջին 70 տարիների ընթացքում քննարկման առարկա է դարձել չորս անգամ։ Դեռևս 1925 թ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ա. Գ. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց պատմաբանների մի հանձնախումբ (Լեո, Դ. Անանուն, Աս. Խաչատրյան, Թ. Ավդալբեգյան և ուրիշներ), որը մի քանի նիստեր հրավիրեց՝ մշակելու հայ ժողովրդի պատմության պարբերացման սկզբունքները։ Այդ նիստերի ժամանակ է, որ առաջարկություն արվեց (Թ. Ավդալբեգյան) հայոց պատմությունը պարբերացնել «մարքսիստական պատմագիտության պահանջների համաձայն»։ Չնայած Լեոյի համառ դիմադրությանը, նիստն ընդունեց Թ. Ավդալբեգյանի այդ առաջարկը։ Հետա-

քրոքիր է նշել, ասաց զեկուցողը, որ այսօր՝ մեր համաժողովում բարձրացված շատ հարցեր նույնությամբ քննարկվել են նաև 1925 թ. բանավեճի ընթացքում։ Այստեղ ևս առաջարկություն արվեց հայ ժողովրդի նոր պատմության սկիզբը համարել XVI—XVII դարերը (Լեո)։ Ուրիշները, մերժելով այդ, առաջարկեցին նոր պատմությունը սկսել XIX դ. սկզբից, երբ տեղի է ունենում հայության վերակենդանացումը՝ «Ռուսաստանի տնտեսական ու մշակութային ազդեցությամբ ու քաղաքական միջամտությամբ» (Ռ. Անանուն)։

Հետագայում պարբերացման խնդրին նվիրված գիտական բանավեճեր հրավիրվեցին 1947 թ. և 1951 թ.։ Այդ բանավեճերի ընթացքում է, որ ի վերջո ձևավորվեց, կաղապարվեց պարբերացման մարքսյան սխեման։ Նշելի է, որ վերջին քննարկումների ժամանակ այլընտրանքային տարբերակներ չեն եղել և վեճը հիմնականում ընթացել է ստրկատիրական հասարակարգի գոյության հարցի շուրջ։

Այսօրվա քննարկումը, նկատեց Պ. Հ. Հովհաննիսյանը, շատ կարևոր է այն տեսակետից, որ հիմնականում մերժվեց պարբերացման միակը համարվող ու քարացած սկզբունքը՝ ֆորմացիոն սկզբունքը և առաջարկվեցին բազմաթիվ այլընտրանքային տարբերակներ։ Պարբերացումը կատարելիս պետք է հաշվի առնել տվյալ հասարակության ինչպես քաղաքական ու մշակութային, այնպես էլ հասարակական զարգացման մակարդակը։ Ելնելով վերոնշյալից՝ զեկուցողը կարծիք հայտնեց, որ հայոց պատմությունը պետք է ստորաբաժանել հետևյալ կերպ՝

1. Համայնական (վաղնջական ժամանակներից մինչև մ. թ. ա. XXIII դ.),
2. Տոհմատիրական (մ. թ. ա. XXIII դ.—մ. թ. ա. II դ.),
3. Նախարարական (մ. թ. ա. II դ.—մ. թ. XIII դ.),
4. Առևտրական կապիտալի (XIV դ.—XVII դ.),
5. Նոր (XVII դ.—1918 թ.),
6. Արդի (1918 թ.—մեր օրերը)։

Քննարկվող հարցերի շուրջ ելույթներ ունեցան նաև պատմական գիտությունների թեկնածուներ Բ. Հ. Հարությունյանը, Մ. Ա. Կատվալյանը, Ա. Հ. Սիմոնյանը, Գ. Մախմուրյանը և ուրիշներ։

Գիտական համաժողովի արդյունքներն ամփոփեց Լ. Ա. Խուրշուդյանը։ Նա նշեց, որ համաժողովն անցավ խիստ գործնական ու արդյունավետ մթնոլորտում, որ նրա հրավիրումը ուշ հարցի կապակցությամբ տեղին էր ու ժամանակին։ Բանավեճը ցույց տվեց, որ մերժելի է պատմության պարբերացման ֆորմացիոն սկզբունքը։ Ինքը՝ ելույթ ունեցողը, համերաշխվում է վերջին տեսակետի հետ։ Լ. Ա. Խուրշուդյանն ընդգծեց, որ Մարքսի սոցիալ-տնտեսական հինգ ֆորմացիաների տեսությունը հայ ժողովրդի պատմության պարբերացման համար հիմք չի կարող դառնալ հետևյալ պատճառներով. ա) Հայ ժողովուրդը չի անցել այդ հնգաստիճան սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր փուլերը. բ) Արդի պատմաբանների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ Հայաստանում ստրկատիրական հասարակարգ չի եղել։ Այն կյանքի է կոչվել հայ ժողովրդի պատմությունը մարքսյան սխեմաներին հարմարեցնելու համար. գ) Ինչ վերաբերում է կապիտալիստական ֆորմացիայի գոյությանը Հայաստանում, ապա դա ևս այնպես պարզունակ չի դրվում, ինչպես այն ներկայացվում է խորհրդահայ պատմագիտության մեջ։

Բանն այն է, որ կապիտալիստական հարաբերությունների ծագման և զարգացման շրջանը հայ ժողովուրդը թևակոխել է երկու պետությունների՝ Թուրքիայի և Ռուսաստանի միջև մասնատված։ Դրան պետք է ավելացնել նաև այն, որ տարբեր դարերում հայրենիքից հարկադրաբար հեռացած հայության ստվար զանգվածները բնակություն էին հաստատել աշխարհի բազմաթիվ երկրներում։ Հայաստանը և հայության ամեն մի հատված կապիտալիստական հարաբերությունների շրջանն է թևակոխել այն երկրի հետ միասին, որի տիրապետության տակ գտնվել է, կամ որտեղ բնակվել է։ Այդ

պատճառով էլ Հայաստանի տարբեր մասերը և գաղթօջախները տարբեր ժամանակներում և այլ ձևերով են ընդգրկվել կապիտալիստական հարաբերությունների մեջ։ Հայ ժողովուրդը ուրիշ ժողովուրդների տիրապետության տակ է մտել կապիտալիստական հարաբերությունների մեջ, սակայն ազգային-պետական հասարակական-տնտեսական կապիտալիստական ֆորմացիա չ՝ ունեցել։

Ահա թե ինչու, եթե մենք անգամ ընդունելի համարենք պատմության պարբերացման մարքսյան մոդելը, նշեց Լ. Ա. Խուրշուդյանը, միևնույն է, կապիտալիստական սոցիալ-տնտեսական ֆորմացիան չի կարող չափանիշ դառնալ ամբողջ հայ ժողովրդի պատմության պարբերացման համար։

Վերը շարադրվածը ավելի ցցուն է դարձնում հայոց պատմագիտության մեջ տիրապետող տեսակետի անհեթեթությունը, որի համաձայն հայ ժողովրդի նոր շրջանի պատմությունը սկսվում է 1801 թվականից։ Նման պարբերացման հիմքում ընկած է ոչ թե որևէ կոնցեպցիա, այլ կոմունիստական վարչակարգին հատուկ կամայականություն։

դ) Կոմունիստական երկրներում մինչև վերջերս գոյություն ունեցած և մի քանի երկրներում դեռևս գոյատևող լենինյան-ստալինյան սոցիալիզմի մոդելը ոչ մի առնչություն չունի սոցիալիզմի այն հասկացության հետ, որին ծանոթ է մարդկությունը միջազգային սոցիալիստական գործիչների աշխատություններում տրված ձևակերպումներից։ Մի բան անկասկած է, որ մեր սերնդի ճաշակած «սոցիալիստական հասարակարգն» իր էությամբ եղել է եվրոպական ֆաշիզմի ռուսական տարբերակը։

ե) «Նախնադարյան-համայնական» հասարակարգն իր հիմնական ժամանակահատվածով չի առնչվում որևէ ժողովրդի կոնկրետ պատմության հետ։ Այն ընդգրկում է մարդկային հասարակության նախապատմությունը։ Եվ քանի որ ստրկատիրական հասարակարգ Հայաստանում գոյություն չի ունեցել, կաբելի է հին Հայաստանի պատմությունը սկզբունքորեն բաժանել երեք ենթաշրջանների. 1. Նախապատմություն, 2. Հնագույն շրջանի պատմություն. հայ ժողովրդի ձևավորումը, 3. Հին շրջանի պատմություն. հայ հին պետականությունը։

զ) Պատմության պարբերացման մարքսյան տեսությունն ընդունելի չէ նաև այն պատճառով, որ նա ստեղծվել է ոչ թե ազգային, այլ սոցիալ-տնտեսական, դասակարգային հիմքի վրա։

Մարքս-լենինյան տեսության նպատակն անդասակարգ հասարակության ստեղծումն է, որտեղ բոլոր ազգերը պետք է ձուլված լինեն մի նոր հանրության մեջ։ Մարքսիզմը կոմունիստական հասարակության ուղին տեսնում է դասակարգային պայքարի մեջ։ Թերևս դա է պատճառը, որ Մարքսի մարդկային հասարակության զարգացման հինգ ֆորմացիաների հիմքում դրված են ոչ թե ազգային, մշակութային, կրոնական, քաղաքական-պատմական, այլ սոցիալ-տնտեսական, դասակարգային գործոններ։

Մարքսյան տեսությունը այդ հարցում հետևողական է. ձգտելով ազգերի վերացմանը, նա բոլոր ժողովուրդներին, շատ անգամ ոչ մի պատմական, կրոնական, քաղաքական, լեզվական և մշակութային կապ չունեցող, տարբեր քաղաքակրթությունների պատկանող, դնում է զարգացման նույն փուլերի և սխեմաների մեջ։ Նման մոտեցմամբ ժողովուրդները զրկվում են ազգային պատմությունից և ազգային դեմքից։ Ազգային պատմությունը վերածվում է դասակարգային պայքարի պատմության։

Այն պատմական գործոնները, չափանիշները, որոնք պետք է դրվեին ժողովրդի պատմության պարբերացման հիմքում, դառնում են երկրորդական, երրորդական կամ նույնիսկ հակաժողովրդական՝ ինչպես կրոնը, ազգային պայքարը (ազգայնամոլություն) և այլն։

Ոչ մի ժողովուրդ կամավոր նման հակաազգային տեսություն չի կարող որդեգրել և չափանիշ դարձնել սեփական պատմության պարբերացման համար։ Ժխտելով սոցիալ-տնտեսական արտադրատեսակները, որպես ժողովրդի պատմության պարբերացման չափանիշ, նկատեց Լ. Ա. Խուրշուդյանը,

մենք միաժամանակ շատ հեռու ենք այն մտքից, որպեսզի հերքենք դրանց գոյությունն ընդհանրապես։

Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմքում, սակայն սա, որպես չափանիշ պետք է դնել ոչ թե սոցիալ-տնտեսական, դասակարգային կամ կուսակցական գործոններ, այլ ազգային (պետականություն, ազգային-ազատագրական պայքար, ազգային հեղափոխություն), քաղաքական, մշակութային, կրոնական և համաշխարհային կյանքի՝ ժողովրդի պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող դարակազմիկ, շրջադարձային, բախտորոշ իրադարձությունները։

Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե ժողովրդի պատմության պարբերացումը կատարելիս պետք է հիմք ընդունել վերը հիշատակված գործոններից միայն մեկը։ Ավելի հավանական է, որ տվյալ դեպքում հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների պարբերացման չափանիշները որոշելիս, անհրաժեշտ լինի ցուցաբերել համալիր մոտեցում, այսինքն՝ մի դեպքում կարող է հիմք ընդունվել պետականության գործոնը, մի այլ դեպքում՝ մշակութայինը, երրորդ դեպքում՝ երկու գործոնները միասին և այլն։

Հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցը քննելիս չպետք է աչքաթող անել մի կարևոր հանգամանք ևս։ Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից է։ Այն ապրել ու գոյատևել է համաշխարհային քաղաքակրթության շրջանակներում, հարստանալով և հարստացնելով համաշխարհային պատմությունն ու մշակույթը։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդի պատմության պարբերացման համար հիմք ընդունելով ազգային զարգացման գործոնները, միաժամանակ այն պետք է դիտել որպես համաշխարհային պատմության բաղկացուցիչ մաս և չկտրել համաշխարհային պատմության պարբերացումից, նրա հիմքում դրված կարևորագույն չափանիշներից։ Եթե նման ելակետերից ելնենք, ապա հայ ժողովրդի պատմության պարբերացված շրջանների չափանիշները կլինեն ազգային և միևնույն ժամանակ հիմնականում կհամընկնեն կամ շատ քիչ կտարբերվեն համաշխարհային պատմության պարբերացումից։

Հիմք ընդունելով վերոհիշյալ չափանիշները, Լ. Ա. Խուրշուդյանը գտավ, որ հայ ժողովրդի պատմությունը պետք է պարբերացնել հետևյալ կերպ. հին Հայաստանի պատմություն, միջնադարյան Հայաստանի պատմություն, Հայաստանի նոր շրջանի պատմություն։

Համաշխարհային պատմագիտությունը «Նորագույն շրջանի պատմություն» պարբերացումը չի ընդունում, այլ դրա փոխարեն, որպես առանձին փուլ, առանձնացնում է «Արդի ժամանակաշրջանի պատմություն» հասկացությունը։ Սա ընդունելի տարբերակ է, եթե ելնենք նաև համաշխարհային և հայոց պատմագիտության պարբերացման ունիֆիկացման անհրաժեշտությունից։

Այժմ տեսնենք, շարունակեց Լ. Ա. Խուրշուդյանը, թե վերոհիշյալ շրջանները ո՞ր դարերով են պարբերացվում և ո՞ր չափանիշներն են ընկած այդ պարբերացման հիմքում։

Ա. Որպես Հին Հայաստանի պատմության ավարտ և միջնադարյան Հայաստանի պատմության սկիզբ, մեզ թվում է, պետք է դիտել մեր թվարկության V դարը, որովհետև. ա) հին հայկական պետությունը մեր թվարկության V դ. սկզբին ապրում է իր անկումը, բ) ինչպես նշեց պրոֆ. Դ. Խ. Սարգսյանը, հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում տեղի է ունենում դարակազմիկ հեղաշրջում։ Պատմական ասպարեզից հեռանում է հեթանոսական կրոնը՝ իր տեղը զիջելով քրիստոնեությանը, գ) տեղի ունեցավ մշակութային հեղափոխություն, ստեղծվեց հայոց այբուբենը։ Այս շրջանը պատմության մեջ մտավ որպես «Ոսկեդար»։

Ինչպես տեսնում ենք, այս շրջանի պատմության պարբերացման հիմքում դրված են մի քանի գործոններ՝ պետականություն, կրոն և մշակույթ։

բ) Հետագա շրջանների պատմության պարբերացման հիմքում որպես չափանիշ պետք է դրվեն հայ պետականության և այն կորցնելուց հետո առ-

դային-ազատագրական պայքարի գործոնները։ Պետականության և ազգային-ազատագրական պայքարի գործոններ—ահա սրանք են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն միջնադարյան Հայաստանի պատմությունից հետո ընկնող շրջանների պարբերացման հիմքում։

Ելնելով վերոհիշյալ սկզբունքներից հայ ժողովրդի պատմության նոր շրջանը պետք է սկսել XVII դարից, երբ զարթոնք է ապրում հայոց ազատագրական պայքարը, ձևավորվում է ազատագրական շարժման գաղափարախոսությունը։

դ) Հիմք ընդունելով նույն տեսական սկզբունքները, հանդում ենք այն հետևության, որ հայ ժողովրդի պատմության «արդի ժամանակաշրջանը» կամ ինչպես նախկինում էր ասվում «նորագույն շրջանը» պետք է սկսել 1918 թ. մայիսից՝ Հայաստանի Հանրապետության ստեղծումով, հայ պետականության վերականգնումով, որն արդյունք էր հայ ժողովրդի մղած դարավոր ազատագրական պայքարի։ Այդ շրջանը շարունակվում է մինչև այսօր։

Ելնելով վերը շարադրվածից, Լ. Ա. Խուրշուդյանը գտավ, որ դիտաժողովի մասնակիցների մեծամասնության կողմից պաշտպանություն գտած հայ ժողովրդի պատմության նոր պարբերացումը կարելի է պատկերացնել հետևյալ ձևով.

ա) **Հին Հայաստանի պատմություն.** Հնագույն շրջանից մինչև մեր թվականության V դարը։

բ) **Միջնադարյան Հայաստանի պատմություն,** V դ.—XVII դ.։

գ) **Նոր շրջանի պատմություն.** XVII դ.—1918 թ. մայիս, Հայաստանի Հանրապետության ստեղծումը։

դ) **Արդի ժամանակաշրջան.** 1918 թ. մայիս—մինչև մեր օրերը։

Վերջում պրոֆ. Լ. Ա. Խուրշուդյանը հավաստիացրեց, որ առաջիկայում պատմաբանների հայկական ընկերության գիտաժողովներում կշարունակվեն քննարկումները՝ նվիրված պարբերացման հարցերին, քանզի նոր պարբերացման վերը նշված ընդհանուր շրջանների ներքին կառույցների հարցերը դեռևս վիճահարույց են, հստակեցված չէ ժամանակագրությունը։

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ